ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

(Ծննդյան 90-ամյակի առթիվ)



Լրացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակների (1951, 1953), ՀԽՍՀ պետական մրցանակների (1967, 1983, հետմահու) դափնեկիր, ականավոր կոմպոզիտոր և տաղանդավոր դաշնակահար Առնո Հարությունի Բաբաջանյանի ծննդյան 90-ամյակը:

Ա. Բաբաջանյանը ծնվել է 1921 թ. հունվարի 22-ին Երևանում: 1947 թ. դրսեկության կարգով ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ֆակուլտետը՝ Վարդգես Տալյանի դասարանը, իսկ 1948 թ.՝ Մոսկվայի կոնսերվատորիայի՝ խորհրդային պիանիզմի դպրոցի հիմնադիրներից մեկի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, խոշոր մանկավարժ Կոնստանտին Իգումնովի դաշնամուրային դասարանը: Կ. Իգումնովը շատ բարձր էր գնահատում Բաբաջանյան-դաշնակահարին. տեսնելով նրա բացառիկ տաղանդը և հաշվի առնելով, որ ձեռքերի կառուցվածքի շնորհիվ կարող է հեշտությամբ նվաճել դաշնամուրային տեխնիկայի բարձունքները՝ բազմիցս խորհուրդ էր տալիս՝ "Арно, голубчик, ну зачем Вы сочиняете музыку?! Ведь мы теряем великого пианиста"[1]:

Մոսկվայի կոնսերվատորիան ավարտելիս Ա. Բաբաջանյանն ավարտական քննության ծրագրի շրջանակում նվագում է Ս. Տանեևի պրելյուդը և ֆուգան, Ֆ. Շոպենի էտյուդները, Բեթհովենի «Ապասիոնատը», Ս. Ռախմանինովի պրելյուդները և Դաշնամուրային երկրորդ կոնցերտը: «Դիպլոմային ծրագիրը հնչեց 1948 թ. հուլիսին Մոսկվայի կոնսերվատորիայի փոքր դահլիճում, որը լեփ-լեցուն էր ունկնդիրներով, քանզի Բաբաջանյանը շատ հանրահայտ էր կոնսերվատորիայի ուսանողների և դասախոսների շրջանում: Տանեևի պրելյուդի և ֆուգայի կատարումը գերազանցեց բոլոր սպասելիքները: Ռախմանինովի պրելյուդները հնչեցին այնպես, որ ծերունազարդ երաժիշտներից շատերը խոստովանեցին՝ «Փակում ես աչքերդ, և թվում է, թե նվագում է ինքը՝ Սերգեյ Վասիլևիչը», իսկ համերգի ավարտին հնչած Ռախմանինովի կոնցերտը դարձավ իսկական կուլմինացիա: Թե ինչ էր կատարվում դրանից հետո արտիստական սենյակում՝ դժվար է պատկերացնել. շատերի աչքերին արցունքներ, հիացական բացականչություններ, ջերմ գրկախառնություններ...»[2]: Քննական հանձնաժողովի անդամների խնդրանքով Ա. Բաբաջանյանը նվագում է Սկրյաբինի ոճով գրված իր պրելյուդը, և պրոֆեսորները կարծում են, թե Սկրյաբինի՝ իրենց անհայտ ստեղծագործությունն են ունկնդրում:

---

[1] **Золотова И.** *Пути развития пианизма в Армении (вторая половина XX века), Е., 2010, с. 120.*

[2] **Арутюнян А.** *Арно (Երաժշտական Հայաստան, 2006, N 4 (23), с. 12).*

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Սվյատոսլավ Ռիխտերի համոզմամբ՝ "Он был бы крупнейшим пианистом… Но он писал музыку. И с головой уйдя в композицию, как пианист выступал, только играя свое"[3]: Իսկ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էմիլ Գիլելսը նրան անվանել է "потрясающий пианист" և խոստովանել, որ եթե նա ընտրեր դաշնակահարի ուղին, ապա կդառնար հռչակավոր դաշնակահար[4]:

Թվում էր, թե Ա. Բաբաջանյանը պիտի ընտրի դաշնակահարի ուղին, սակայն հաղթեց կոմպոզիցիան: Ու միանգամայն օրինաչափ է, որ փայլուն դաշնակահար Ա. Բաբաջանյանի ստեղծագործական ժառանգության կարևոր մասը գործիքային երաժշտությունն է. իր պաշտելի դաշնամուրը նրան ուղեկցեց ողջ կյանքում, հենց դաշնամուրային գործերում առավել լիարժեք ու հետևողականորեն բացահայտվեցին կոմպոզիտորի ստեղծագործական զարգացման բոլոր փուլերը: Անդրանիկ գործը իննամյա Առնոյի՝ հարազատ մանկապարտեզին նվիրված «Պիոներական քայլերգն» էր, որը 1932 թ. 1000 օրինակ տպաքանակով հրատարակում է Հայպետհրատը՝ Չարենցի նախաձեռնությամբ: «Մի անգամ,- հետագայում կհիշի Հայպետհրատի երաժշտական բաժնի ղեկավար Մ. Մազմանյանը,- Չարենցը մեզ հաղորդեց իր հիացմունքը նախորդ օրը մի շնորհալի երեխայի ունեցած ելույթի մասին. Առնոյի հեղինակած «Պիոներական քայլերգը» նրան շատ էր դուր եկել: Տեսնելով երեխայի ինքնատիպ տաղանդը, Չարենցը որոշում է խրախուսել նրան և լույս ընծայել քայլերգը»[5]: Բնագրի վրա Չարենցը մակագրում է opus 1:

Ա. Բաբաջանյանի վաղ շրջանի գործերից են Լարային N 1 կվարտետը (1943), Դաշնամուրային կոնցերտը (1944), Լարային N 2 կվարտետը (1947) և Ջութակի կոնցերտը (1949)[6]:

Ա. Բաբաջանյանի խոշոր կտավի անդրանիկ երկերից էր Դաշնամուրային կոնցերտը՝ նվիրված Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25-ամյակին: Տարիներ անց՝ 1978 թ., կոմպոզիտորը խոստովանել է, թե «հենց դաշնամուրային առաջին կոնցերտից էլ կարելի է սկսել իմ ստեղծագործական կենսագրությունը»[7]: Կոնցերտի առաջին մասն առաջին անգամ հնչեց 1944 թ. Թբիլիսիում՝ հեղինակի կատարմամբ, Անդրկովկասյան հանրապետությունների երաժշտության տասնօրյակի շրջանակում: 1946 թ. ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության մրցանակաբաշխությունում Կոնցերտի համար կոմպոզիտորն արժանանում է երկրորդ մրցանակի: Երկրորդ անգամ Կոնցերտը կատարվեց Մոսկվայում, 1947 թ. ու այլն լռեց՝ չհրատարակվեց, անգամ՝ կորսվեց ձեռագիրը:

Ա. Բաբաջանյանը 1950 թ. վերադառնում է հայրենիք և դասավանդում Երևանի կոնսերվատորիայի դաշնամուրային դասարանում՝ շարունակելով ստեղծագործել: Նույն թվականին Ալ. Հարությունյանի հետ համատեղ ստեղծվում է «Հայկական ռապսոդիան». հեղինակների կատարմամբ հնչելով աշխարհի տարբեր բեմահարթակներում՝ այն մեծ

---

[3] **Золотова И.,** *նշվ. աշխ., էջ 120:*

[4] **Апоян Ш.** *Арно Бабаджанян в воспоминаниях современников (Երաժշտական Հայաստան, 2006, N 4 (23), с. 17).*

[5] **Թաշչյան Ս.,** *Առնո Բաբաջանյան, Ե., 1961, էջ 12-13:*

[6] *Ջութակի կոնցերտը 1972-ին ձայնագրվել է Վ. Մոկացյանի և ՀԽՍՀ պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, դիրիժոր՝ Մ. Մալունցյան:*

[7] **Митинян А.** *О фортепианном концерте Арно Бабаджаняна (Երաժշտական Հայաստան, 2006, N 4 (23), с. 55-56).*

ժողովրդականություն վայելեց:

Ա. Բաբաջանյանի անհատական ոճը լիարժեք դրսևորվեց «Հերոսական բալլադում» (1950, ԽՍՀՄ պետական մրցանակ՝ 1951) և Դաշնամուրային տրիոյում (1952, ԽՍՀՄ պետական մրցանակ, 1953): Շուտով ստեղծվում են Ջութակի և դաշնամուրի սոնատը (1959), Թավջութակի կոնցերտը (1962), Լարային N3 կվարտետը՝ նվիրված Դ. Շոստակովիչի հիշատակին:

Դաշնամուրի և նվագախմբի համար «Հերոսական բալլադը» (կոմպոզիտորն այն անվանել է սիմֆոնիկ վարիացիաներ դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար), դառնալով խորհրդային երաժշտության կարևոր հանգրվաններից մեկը, նոր էջ գրեց հայ գործիքային կոնցերտի պատմության մեջ՝ հեղինակին բերելով համաշխարհային հռչակ: «Սրանում հեղինակը արտացոլել է մեր իրականության առավել էական կողմերն ու գծերը՝ իսկական հումանիզմը, հերոսականությունն ու լավատեսությունը»[8]: «Հերոսական բալլադն» առաջին անգամ կատարել են հեղինակը և սիմֆոնիկ նվագախումբը՝ Ս. Չարեքյանի ղեկավարությամբ (1950 թ.): Հետագայում բազմիցս հնչել է Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բրյուսելում, Վիեննայում, հեղինակի, Էմիլ Գիլելսի, Վիկտոր Մերժանովի, Լև Վլասենկոյի, Արմեն Բաբախանյանի, Կարինե Օհանյանի և այլոց կատարմամբ: Իսկ 1985 թ. «Հերոսական բալլադը» բեմ բարձրացավ Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում՝ Աշոտ Ասատուրյանի սցենարով բեմադրվելով որպես բալետ-մեկմասանի սիմֆոնիա:

Տրիոն դաշնամուրի, ջութակի և թավջութակի համար, որը սովետական կամերային երաժշտության նշանակալի ստեղծագործություններից էր, հաջողությամբ կատարվելով Երևանում և Մոսկվայում, հեղինակին արժանացրեց ԽՍՀՄ պետական մրցանակի: «Իր գաղափարական մտահղացմամբ, համադրվող կերպարների սուր կոնֆլիկայնությամբ, զարգացման նպատակամղվածությամբ, անկեղծությամբ և անմիջականությամբ Բաբաջանյանի Տրիոն դեռևս XIX դարավերջին ռուսական երաժշտության մեջ հաստատված սգո տրիոյի ավանդույթի շարունակությունն է, թեև չունի որոշակի նվիրում»[9]: Թեև Տրիոն չունի ծրագիր, սակայն բնույթի ու երաժշտական շարադրանքի շնորհիվ կռահվում է ծրագրային մտահղացումը: Ստեղծագործության զարգացման գիծը պայմանավորում է առաջին անգամ նախաբանում հնչող լայտմոտիվը: «…Տրիոյի ողջ երաժշտությունն ընկալվում է որպես քնարական խռովահույզ մի պատում՝ մարդկային ուժեղ անհատականության կյանքի ճանապարհին ծառացած ողբերգական խոչընդոտների դեմ պայքարի մասին: Որպես այս ողբերգական խոչընդոտների ընդհանրացված կերպար հանդես է գալիս վերոհիշյալ լայտմոտիվը: ….Լայտմոտիվի ողբերգական կերպարին հակադրված են երաժշտական մյուս կերպարները»[10]: Տրիոյի կարևոր առանձնահատկություններից է սիմֆոնիզմը, որը դրսևորվում է երաժշտական գաղափարի հետևողական զարգացմամբ և թեմաների միջանցիկ զարգացմամբ:

Հայ և խորհրդային երաժշտության մեջ նշանակալի երևույթ դարձավ կոմպոզիտորի ստեղծագործական էվոլյուցիայի նոր փուլը նշանավորող Թավջութակի և նվագախմբի

---

[8] **Коптев С., Тэрьян М., Рухкян М.** *Симфоническая музыка и инструментальный концерт (Музыкальная культура Армянской ССР. Сб. статей, М., 1985, с. 175).*

[9] **Аматуни С.** *Арно Бабаджанян. Инструментальное творчество. Исследование, Е., 1985, с. 47.*

[10] **Գյոդակյան Գ.,** *Էջեր հայ երաժշտության պատմությունից, Ե., 2009, էջ 134:*

կոնցերտը: Խորապես ազգային երկմաս Կոնցերտը միաժամանակ կրում է ժամանակակից երաժշտական մտածողության դրոշմը:

Ա. Բաբաջանյանի նորարարական գործերի շարքում կարևոր տեղ են գրավում «Պոլիֆոնիկ սոնատը» (1947, 2-րդ խմբ., 1956) և «Վեց պատկեր» դաշնամուրային շարքը (1965, ՀԽՍՀ պետական մրցանակ, 1967), որը նոր խոսք էր հայ և խորհրդային երաժշտության մեջ: Ա. Բաբաջանյանը Խորհրդային Միությունում առաջիններից էր, որ կիրառեց դոդեկաֆոն գրելաոճը՝ վարպետորեն համադրելով մի կողմից՝ դոդեկաֆոն տեխնիկան, մյուս կողմից՝ հայ ժողովրդական մելոսը և ռիթմական դարձվածքները: Շարքը փուլային նշանակություն ունեցավ կոմպոզիտորի ստեղծագործական կյանքում:

Կոմպոզիտորի համար բախտորոշ դարձած երգն ուղեկցեց նրան ստեղծագործական ողջ կյանքում: Հենց երգերում, թատերական ներկայացումների համար գրած երաժշտության (Վ. Սարոյան, «Իմ սիրտը լեռներում է», Գ. Սունդուկյանի անվան թատրոն) և կինոերաժշտության («Հասցեատիրոջ որոնումները», «Ամպրոպի արահետով», «Անձամբ ճանաչում եմ», «Առաջին սիրո երգը» (համահեղինակ՝ Ղ. Սարյան), «Անդրաշխարհյան փեսացուն», «Բաղդասարը բաժանվում է կնոջից», «Երջանկության մեխանիկա» (ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1983), ինչպես նաև «Հարսնացուն Հյուսիսից», ««Մրցույթի էին եկել խոհարարները» և այլ հեռուստաֆիլմեր) մեջ էլ առավելագույնս դրսևորվեց Ա. Բաբաջանյանի մեղեդային բացառիկ տաղանդը:

Ա. Բաբաջանյանը 1956 թ. տեղափոխվում է Մոսկվա, և սկսվում է նրա տնական ու բեղմնավոր ստեղծագործական համագործակցությունը բանաստեղծ Ռ. Ռոժդեստվենսկու և երգիչ, բարիտոն, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Մուսլիմ Մագոմանի հետ՝ “Благодарю тебя”, “Зимняя любовь”, “Пока я помню – я живу”, “Позови меня”, “Свадьба”, “Судьба”, “Вальс прощания”, “Такая нам судьба дана”, “Письмо”, “Ноктюрн”, “Прошлая осень”, “Ребята, которых нет…”, “Приснилось мне”, “Загадай желание”, “Встреча”, “Моя Вселенная”… «Ես գտա Բաբաջանյանին, Բաբաջանյանը գտավ ինձ, մենք երկուսս գտանք Ռոժդեստվենսկուն: Այդպես էլ քայլեցինք մինչև վերջ»,- հետագայում կխոստովանի Մ. Մագոմանը: Սոպոտում 1969 թ. կայացած էստրադային երգի միջազգային IX փառատոնին ԽՍՀՄ միակ պատվիրակ Մ. Մագոմանի կատարմամբ Ա. Բաբաջանյանի “Сердце на снегу” երգը երգչին արժանացնում է գլխավոր պարգևի: Բացառիկ էր Ա. Բաբաջանյանի և Ե. Եվտուշենկոյի (“Не спеши”, “Чертово колесо”, “Твои следы”), Ա. Վոզնեսենսկու (“Год любви”, “Москва-река”, “Верни мне музыку”, “Парижский снег”), Լ. Դերբենյովի (“Лучший город земли”, “В нежданный час”, “Ты приснишься мне”) հետ համատեղ գրված երգերի հաջողությունը: Արձագանքելով 1965 թ. Կուբայում անցկացված գեղեցկության մրցույթին՝ Ա. Բաբաջանյանը գրում է “Королева красоты” երգը, որը 1965 թ. առաջին անգամ հնչելով ռադիոյով, անմիջապես դառնում է շլյագեր. դեռևս նոտաները չհրատարակված՝ ողջ ժողովուրդը երգում է այն: Տեքստի հեղինակ Ա. Գորոխովի հետ համագործակցությամբ ծնվեցին նաև “Будь со мной”, “Солнцем опьяненный”, “Мир на двоих” երգերը, որոնք ևս փայլուն կատարեց Մ. Մագոմանը: Էստրադային երգերի շնորհիվ Ա. Բաբաջանյանը վայելեց խորհրդային ողջ ժողովրդի սերը:

Ֆենոմեն էր նաև Ա. Բաբաջանյանի կինոերաժշտությունը. կինոֆիլմերի համար գրված երգերն անջատվում էին ֆիլմերից, թարգմանվում և ապրում իրենց ինքնուրույն կյանքով: «Առաջին սիրո երգը» ֆիլմից (1951) «Երգ առաջին սիրո», «Սիրո երգ» և «Իմ Երևան» երգերն անմիջապես հանրահայտ դարձան: Իսկ «Սերենադը» (Երևանի սիրուն աղջիկ) վաղուց արդեն դարձել է «ժողովրդական», և քչերին է հայտնի, որ այդ երգի հեղինակը Բաբաջանյանն է:

Ծանրակշիռ էր կոմպոզիտորի ներդրումը գործիքային ջազի, երաժշտական-թատերական ժանրերի բնագավառում ևս: Երգերով ու կինոերաժշտությամբ Ա. Բաբաջանյանը մեծապես նպաստեց խորհրդային և հայկական էստրադային երաժշտության զարգացմանը: «Որն է Ձեր ամենասիրելի երգը» հարցին Ա. Բաբաջանյանը պատասխանել է. «Այն դեռևս չեմ գրել»: Այդպես էլ 1983 թ. նոյեմբերի 11-ին հեռացավ կյանքից երգի անզուգական վարպետը՝ դեռևս չստեղծած իր ամենասիրելի երգը: Սակայն նրա երգերը սիրեց ու երգեց ժողովուրդը. երգեց հայերեն ու ռուսերեն, Կալինինգրադից մինչև Վլադիվոստոկ, Մոսկվայից՝ Երևան... Նրա երգերը կատարեցին խորհրդային և ռուսական էստրադային երաժշտության աստղերը, ռուսական ժողովրդական երգի վարպետները, օպերային երգիչները... Իսկ «Ազգ փառապանծը» Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ հնչում է և կհնչի որպես հայ ժողովրդի հավերժության ձոն:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա.Գ.
Արվեստագիտության դոկտոր